ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

22.01.2014 թվականի N.05-Ա

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածով, ապահովելով 51-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները և հաշվի առնելով <Գետն Գրուպ> ՓԲ ընկերության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 035 գրությանը կից ներկայացված փաստաթղթերի ու տեղեկատվության՝ օրենսդրությանը համապատասխանությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Համաձայնություն տալ <Գետն Գրուպ> ՓԲ ընկերությանը շահագործման տրամադրված՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի ավազանի Գետափի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը, հավաստված՝ 2007 թվականի մայիսի 22-ին տրամադրված ՇԱԹՎ-29/022 /նախկին հանքարդյունահանման ՀԱ-Լ-14/467 լիցենզիան/ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունով, 2007 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված ընդերքօգտագործման թիվ ՊՎ-022 պայմանագրով և լեռնահատկացման թիվ ԼՎ-022 ակտով, <ԴԼՍ ԳՐՈՒՊ> ՍՊ ընկերությանը փոխանցելուն, ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետը թողնելով անփոփոխ՝ 22.05.2032թ:

2. Ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) կատարել համապատասխան փոփոխություններ՝ ՇԱԹՎ-29/022 արդյունահանման թույլտվությունում և լեռնահատկացման թիվ ԼՎ-022 ակտում.

2) 2-օրվա ընթացքում գրավոր ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-022 պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին.

3) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին - 10-օրյա ժամկետում ապահովել ֆոնդային փաստաթղթերում՝ համապատասխան փոփոխությունների կատարումը:

6. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ